



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ

ԳԻՏԵԼԵԱՅ

ԺԳ. ՏԱՐԻ. ԹԻԻ 21.

1855

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1.

ՆՈՅԵՄԲԵՐ

Ժըմիտ մի եւս, ո՛վ բացազնաց դու արեւ,
 Ժըմիտ մի մեղմ՝ ընդ միգամած օդ փափուկ,
 Մինչ չեւ յերկիր պաղեալ ուի մարգս անտերեւ
 Հասեալ իցեն միրիկք եւ ձեան ձրրձիչ բուք:
 Ժըմիտ մի եւս՝ ի լերկ բըլուրս ուի մերկ ծառ,
 Յարջնաթոյր ժայռս՝ յորոց անց տապ ամարան,
 Եւ յերընջնակ կապոյտ ծաղիկ՝ որ ցըրտառ
 Մէն կայ եւ հուսկ յիւրոյ ազգէն գեղազան:
 Դոյզն այլ մընան մեղուի աւուրք արեւոտ
 Յոր բըզգայցէ ի ցանկս անցից ուի պատնէշ,
 Եւ կռնչիցէ ծըղըիդ դրախտից ի ծըղօտ,
 Եւ դեգերել մեզ ի ճաճանչդ իցէ հեշտ:
 ()Ն, միւս եւս ճոխ ժըմիտ, ուսապա ջան դիցուք
 Կըրել զհողմունս, ըզսառն եւ զօգըս մըղձուկ:

ՊՐԱՅԷՆԴ ԱՄԵՐԻԿԱՅԻ